

«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

ՊԱՇՏՈՆԸ
ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՅԻՆ

Վարկային մասնագետ
Լրիվ աշխատաժամանակ
անորոշ ժամկետով
ՀՀ, ք.Երևան, Սեբաստիա 123

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության Միկրովարկավորման բլոկի վարկային մասնագետի թափուր պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառույթները ներառում են պոտենցիալ վարկառուներ գտնելու աշխատանքների իրականացում, վարկերի տրամադրում, տրամադրված վարկերի վերադարձելիության ապահովում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ընկերության ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում,
- Հաճախորդների ներգրավում,
- Վարկատեսակների վաճառք,
- Վարկային գործի կազմում և վարում,
- Պոտենցիալ վարկառուի կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթի ամբողջականության ապահովում,
- Վարկային նախագծերի որակյալ փորձաքննության իրականացում՝ համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի,
- Նոտարական գրասենյակում գրավի պայմանագրերի ձևակերպում /անհրաժեշտությունից ելնելով/,
- Վարկերի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացում,
- Վարկերի ընթացիկ մոնիթորինգի իրականացում,
- Ընկերության Ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և դեպքերում վարկառուների հետ դրամաշրջանառության իրականացում,
- Վարկերի վերադարձելիությանն ուղղված գործընթացների իրականացում,
- Վարկերի պայմանների վերանայման, դատական կարգով բռնագանձման վարույթների հարուցման, վարկերի վերակառուցման կապակցությամբ իրեն վերապահված գործառույթների իրականացում
- Հաշվետվությունների կազմում և ներկայացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- բարձրագույն կրթություն (ցանկալի է տնտեսագիտական կամ ֆինանսական),
 - ֆինանսաբանական ոլորտում առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ,
 - հանձնարարված առաջադրանքները ժամանակին և պատշաճ որակով կատարելու ունակություն,
 - վերլուծելու ունակություն,
 - կազմակերպելու և առաջնորդելու ունակություն,
 - հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություններ,
 - թիմային աշխատանքի հմտություններ,
 - լարված իրավիճակում լուծումներ գտնելու ունակություն:
- ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ
- աշխատանքը ենթադրում է աշխատաժամանակի մինչև 80%-ը գրասենյակից դուրս աշխատելու պատրաստակամություն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, ք.Երևան, 0032, Սեբաստիա 123 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ anahit.manukyan@kamurj.am՝ հստակ նշելով պաշտոնը, որին հավակնում են: